Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	Երաժշտության ազդեցությունը երեխայի լսողության զարգացման վրա տարրական դասարաններում
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Մարիամ Հովսեփյան Ուսուցիչ 095 88 37 61 mariamovsepyan9@gmail.com Երաժշտության I-VIդասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Գայի անվան 129 հիմնական դպրոց 0101223196 Schol129@schools.am School129.safe.am

Բովանդակություն

1,Ներածություն

2,Հիմնական բովանդակություն

3,Եզրակացություններ, առաջարկություններ

4,Օգտագործված գրականության ցանկ

5,Հավելվածներ

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Արդյո՞ք երաժշտությունը նպաստում է երեխայի լսողության զարգացմանը:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետևյալ կոմպենցիաներին. • Լսողության զարգացման • լեզվական գրագիտական կարողություն . • մշակույթ ինքնաճանաչում և սոցիալական կարողություն. .
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Առաջին դասարան 29 աշակերտ 19 տղա, 10 աղջիկ
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանակական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	**«Եթե մանուկը չի հասկնար ձեր դասավանդությունը, հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկնալ անոր հոգին: Պետք է իջնել մինչև անոր հոգեկան աստիճանը և զայն առնելով ձեզի հետ՝ բարձրացնել»*:*** **Կոմիտաս** «Երաժշտության դասավանդման մեթոդները»: Ուսուցման մեթոդը ուսումնական գործընթացի կազմակերպման ձև է, հասկացությունն իր մեջ ներառում երեք խնդիր՝ ի՞նչ սովորեցնել, ի՞նչու սովորեցնել, ինչպե՞ս սովորեցնել: Մեթոդի ընտրությունը պայմանավորված է մի քանի

	գործոններով աշակերտի գործունեության արդյունավետ կազմակերպմամբ, դասընթացի ուսուցման նպատակով, ուսումնական նյութի յուրահատկությամբ, աշակերտի հնարավորություններով, Ուսուցման կամ դասավանդման կիրառելի մեթոդներն են Պասիվ մեթոդ կամ խոսքային –տեղեկատվական մեթոդ Ակտիվ մեթոդ Փոխներգործուն (Ինտերակտիվ) մեթոդ Ինտերակտիվ մեթոդ Համեմատությունների և ընդհանրացման մեթոդ Երաժշտության մասին մտորելու մեթոդ Համեմատությունների և ընդհանրացման մեթոդ նոր նյութի ծանոթացման և հնի կրկնության մեթոդը: ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽԱՂԻ ՄԵԹՈԴ ԸՆԴՀԱՆՐԱՑՄԱՆ ՄԵԹՈԴ ԱՌԱՋ ԳՆԱԼՈՒ և ՀԵՏ ԴԱՌՆԱԼՈՒ ՄԵԹՈԴ Խթանման փուլի հիմնական առանձնահատկություններից են՝ 1. Նախապատրաստել սովորողներին նոր դասի ընկալմանը. Դա կարելի է կատարել նախորդ դասի հարցման, ամփոփման միջոցով, հատկապես, երբ նոր դասը հնի շարունակությունն է: 2. Բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները: 3. Ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ:

	4. Աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում: Մեթոդներ,որոնք կիրառելի են խթանման փուլում՝ Մտագրոհ Խմբավորում Պրիզմա Մտածիր՞-- զույգ կազմիր՞ -- քննարկիր՞ Երաժշտական դասավանդման մեթոդները նախապայման են ստեղծում երաժշտությամբ հրապուրվելո համար, դրանով իսկ ակտիվացնելով երաժշտության ընկալումը, ստեղծելով համապատասխան ստեղծագործական մթնոլորտ, որի ներքո ուսոցման և դաստիարակության գործընթացը դառնում է հետաքրքրական, հուզական, հրապուրիչ և հասկանալի:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ

Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,

Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:

Պարտադիր է կատարել հղում աղբյուրին

« Երաժշտությունը մտքի հզոր աղբյուր է: Առանց երաժշտական կրթության անհնար է լիարժեք ունենալ մտավոր զարգացում »:

Սուխոմլինսկի

<< Երաժշտությունը տիեզերական այն լեզուն է, որով <<առանց թարգմանի>> մարդկանց հոգիները հաղորդակցվում են>>:

Այս, աշխարհում միայն մի գիր կա, որը հասկանալի է բոլոր ժողովուրդներին՝ դա երաժշտությունն է>>:

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի կյանքում:

Երաժշտությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, արտացոլում և պատկերում է մեր իրականությունը՝ շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները: Երաժշտությունը առաջին հերթին հաղորդակցության միջոց է մարդկանց միջև, հատուկ միջոց է ինքնաարտահայտվելու համար: Երաժշտությունը ուղեկցում է մարդուն ամենուր, հարստացնում է նրա հոգեկան աշխարհը, օգնում է նրան ապրել:

Ըստ ռուս երաժշտագետ Բ. Ասաֆևի՝ «Երաժշտությունը իրականության կերպարահնչյունային արտացոլումն է», նրանում հնչում է կենդանի խոսք՝ հուզված կամ հանգիստ զրույց, դիմում, կոչ, հարց ու պատասխան:

Մարդկության զարգացմանը զուգահեռ երաժշտությունը ձեռք է բերում հատուկ

	նշանակություն, երբ խոսք է գնում անհատի հոգեկան աշխարհի կամ մի ամբողջ մշակույթի մասին, երաժշտությունը հանդես է գալիս որպես այդ մշակույթը բնութագրող, բացահայտող և ներկայացնող խորհրդանիշ: Երաժշտության կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ այն մարդու զգայարանների վրա թողնում է անմիջական և ուժեղ ազդեցություն: Կյանքի առաջընթացը նոր պահանջներ է դնում երաժշտական դաստիարակության առջև: Հանրակրթական դպրոցներում երաժշտության դասավանդումը նոր պահանջներ է առաջադրում: Առաջին դասարանից աշակերտին պիտի ներգրավել երաժշտության մեծ ու գեղեցիկ աշխարհը, այնպես, որ այն զարգացնի ոչ միայն երաժշտական ունակություններն ու կատարողական հմտությունները, այլև պիտի գեղագիտական ճաշակ զարգացնի և նպաստի նաև մտածողության զարգացմանը: Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ-անհատի ձևավորման և զարգացման վրա: Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է այն կարողունակությունների ձևավորմանը: Երաժշտությունը նպաստում է սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը, գեղագիտական և բարոյական չափանիշների, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը, ինչպես նաև կյանքի, շրջապատող աշխարհի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքի դրսևորմանը: Շատ կարևոր է նաև սովորողների երաժշտագեղագիտական ճաշակի և մտահորիզոնի ձևավորումը, որը պետք է իրականացվի ուսումնական էքսկուրսիաների՝ (այդ թվում նաև վիրտուալ) համերգասրահներ, թանգարաններ, թատրոններ այցելության ընթացքում, դրանք կարելի է իրականացնել ակտիվացնելով թանգարանների կրթական ծրագրերի հետ համագործակցությունը: Սովորողի կյանքում կարևոր տեղ է գրավում նաև

դպրոցական համերգների կազմակերպումը, որը ձևավորում է երաժշտություն ունկնդրելու սովորություն և միջոցառումներ կազմակերպելու փորձ:

Տարրական դպրոցի <<Երաժշտություն>> առարկայի չափորոշիչը պահանջում է կատարել երգը, պարը, ունկնդրել, զարգացնել նոտաներով երգելու կարողություններ, երաժշտառիթմական շարժումը: Բացի ծրագրային նյութերից կարելի է ինքնուրույն ընտրել անվանի կոմպոզիտորների ստեղծագործություններ, բայց մատչելի ստեղծագործություններ,

Այս բոլորով հանդերձ, երաժշտության միջոցով ուսուցիչը պետք է կրթի, դաստիարակի երեխային, նպաստի նրա մտածողության զարգացմանը.

Երգեցողությունը երեխայի երաժշտական գործունեության ամենասիրելի, մատչելի և կարևոր ձևերից է. Երգեցողության միջոցով նա մուտք է գործում երաժշտական հնչյունների աշխարհը□ Սովորողները երաժշտական առաջին տպավորություններն ու ապրումները ստանում են երգեցողությունից□

Լինում են բնականից օժտված երեխաներ, որոնք մեծ հետաքրքրություն են դրսևորում երաժշտության նկատմամբ□ Դրանց կողքին կան երաժշտական ավելի թույլ ունակություններ ունեցողներ, որոնք պասիվ և անտարբեր են դասի ընթացքում: Ուսուցիչը պետք է նման երեխաներին պահի ուշադրության կենտրոնում, երբեք չպետք է ասել, թե նրա լսողական և ձայնային տվյալները վատ են□ Երեխան կընկճվի և կկորցնի վստահությունն իր ուժերի նկատմամբ:

Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին և մասնավորապես՝ կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցման գործընթացում ներառելու համար:

Տարրական դպրոցի <երաժշտություն> առարկայի չափորոշիչը պահանջում է կատարել երգը, պարը, ունկնդրել, զարգացնել նոտաներով երգելու կարողություններ, երաժշտառիթմական շարժումը:

Երգեցողությունը օգնում է նաև երեխայի լեզվական թերությունների վերացմանը, երգելիս բառերը արտասանվում են երկարացված, և այդ հանգամանքը նպաստում է առանձին հնչյունների, բառերի պարզ, արտահայտիչ արտաբերմանը:

Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորություններն ու զգայական ընկալումը: Սկսած առաջին դասերից՝ պետք է սովորեցնել երեխաներին ճիշտ երգեցողության կանոնները՝ ձայնի դրվածք, շնչառություն, բառերի հստակ արտասանություն, մաքուր ինտոնացիա և այլն:

Երաժշտական ստեղծագործությունների բովանդակության միջոցով սովորողը ծանոթանում է իր ժողովրդի կենցաղին, աշխատանքին, սովորույթներին և պատմական հերոսներին: Դա նպաստում է հայրենասիրության դաստիարակությանը: Խոսելով երաժշտության միջոցով երեխաների դաստիարակության մասին չի կարելի մոռանալ, որ գործ ունենք աճող օրգանիզմի հետ: Երաժշտառիթմիկ շարժումների միջոցով զարգանում են ճարպկությունը, շարժումների համաչափությունը և գեղեցկությունը: Բարելավվում է երեխայի քայլքը և վազքի որակը: Դրանք դառնում են ավելի սահուն,թեթև, հստակ ու ռիթմիկ: Մշակվում է նաև աշակերտի կեցվածքը:

Ինչպես արվեստի մյուս ճյուղերը,երաժշտությունը ևս ունի ճանաչողական նշանակություն: Դրա միջոցով արտահայտվում են բնության, կյանքի շատ երևույթներ, իրադարձություններ, որոնք հարստացնում են երեխայի մտահորիզոնը: Ստեղծագործական առաջադրանքների ժամանակ երախաները ներգրավվում են հետազոտական գործունեության մեջ, որը պահանջում է մտավոր ակտիվություն: Երգելիս նրանք հորինում են իրենց տարբերակները,գրական տեքստին համապատասխան ստեղծում մեղեդի՝ ուրախ կամ տխուր:Երաժշտառիթմական շարժումների ժամանակ առավել մեծ հաճույքով են մտածում և համակցում պարային և խաղային շարժումները:

Պատմություն

Գեղագիտական դաստիարակության ամենավառ միջոցներից է երաժշտությունը: Այն նաև երեխայի բարոյական բնավորությունը ձևավորելու միջոց է:

Երաժշտությունը, ինչպես նաև արվեստի մյուս տեսակները արտացոլում և պատկերում են մեր շրջակա աշխարհը, մարդկանց, բնության երևույթները:

Երաժշտությունը արվեստի և մշակութային գործունեության ձև է:Երաժշտությունը կարող է փոխել մարդու զարգացումը. արագացնել որոշ բջիջների աճը, դանդաղեցնել մյուսներինը: Երաժծտությունը կարող է ադել նաև էմոցիոնալ ինքնազգացողության վրա:

Երաժշտությունը միշտ էլ հատուկ դեր է ունեցել հասարակության մեջ: Հնում մարդիկ գիտեին, որ արվեստը բուժիչ հատկություն ունի:

Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է ,որը նպաստում է Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է ,որը նպաստում է կարողությունների ձևավորմանը, որի միջոցով զարգանում է ակտիվ անհատ:

Երաժշտության ունկնդրումը և ընկալումը բարդ գործընթաց է, քանի որ այն կախված է յուրաքանչյուր անհատի ներքին զգացողությունից, որը բացահայտելը, ձևավորելն ու զարգացնելը շատ բարդ է: Երաժշտության ունկնդրման միջոցով սովորողը ծանոթանում է նաև երաժշտության պատմությանը, ուսումնասիրում է ունկնդրվող ստեղծագործության ստեղծման պատմական ժամանակաշրջանը, կոմպոզիտորի ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները և այլն:

Անհատական և խմբային երգեցողությունը երեխաների ամենասիրելի գործունեության տեսակն է, որի ընթացքում զարգանում է նրա լսողությունը, ռիթմի ու լադի զգացողությունը:

Երաշտությունը հուզական արվեստ լինելով՝ անմիջականորեն ազդում է երեխաների վրա և ձևավորում նրանց բարոյական կերպարը:Երբեմն երաժշտության ազդեցությունն ավելի ուժեղ է լինում, քան բազմաթիվ խրատներն ու պատիժը

Մատաղ սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված սերունդ:

	Տարրական դասարաններում երաժշտության դասաժամերի հիմնական խդիրը պետք է լինեն զարգացնող և ձևավոևող ուսուցում ապահովելը: Այսինքն այդ գործընթացը պիտի ուղվի սովորողների անհատական և ստեղծագործական հմտությունների զարգացմանը, նաև սովորողների ինքնուրույնությանն ու պատասխանատվությանը:
Հետազոտության ընթացքը	**Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել:** <<Երաժշտություն>> առարկայի ուսումնական հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝ Երեխայի մեջ ձևավորել ճիշտ երգելու ունակություններ, հմտություններ, որոնք և կնպաստեն երգի արտահայտիչ կատարմանը: • Օգնել երեխային կատարել երգերը ուսուցչի օգնությամբ և ինքնուրույն, նվագակցությամբ և ակապելլա: • Զարգացնել երաժշտական լսողությունը, սովորեցնել տարբերել ճիշտ և սխալ երգեցողությունը, հնչյունների բարձրությունը, տևողությունը, շարժման ուղղությունը, լսել ինքն իրեն երգեցողության ժամանակ, զգալ ևուղղել իր սխալը: • Դաստիարակել հետաքրքրություն, սեր և հուզազգացմունքային վերաբերմունք դեպի երաժշտությունը:

	• Ձևավորել և զարգացնել երաժշտական ճաշակ և երաժշտության հետ հաղորդակցվելու պահանջ: • Բացահայտել և զարգացնել սովորողների երաժշտական ընդունակությունները, երգչային ձայնը, կատարողական, ունկնդրման, մեկնաբանման և սեփական կարծիք հայտնելու հմտությունները, • Դաստիարակել հոգևոր և բարոյագեղագիտական բարձր արժեքներով օժտված մարդ, երաժշտության գիտակից և ակտիվ ունկնդիր: • Երաժշտական գործունեություն իրականացնել գործնականորեն կիրառելով ձեռք բերված երաժշտական գիտելիքներն ու հմտությունները: • Սովորողի երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային, նաև համաշխարհային երաժշտությունը: • Արժևորել երաժշտությունը և երաժշտական գործունեությունը, որպես մարդու հոգեկան հարստացման, մշակույթի և կյանքի աղբյուր: • Դաստիարակել հատուկ վերաբերմունք և հետաքրքրություն մշակութային օջախների գործունեության նկատմամբ, դրսևորել պատշաճ վարքագիծ, համապատասխան պահվածք, երաժշտություն ունկնդրելու մշակույթ: • Ապահովել շարունակական կրթության և երաժշտության հետ հաղորդակցվելու հնարավորությունները բոլոր սովորողների համար: • Գիտակցել և արժևորել իր ազգային պատկանելիությունը, նրա պատմությունը, մշակույթը, դրսևորել հպարտություն, հարգալից վերաբերմունք սեփական ազգային արժեքների նկատմամբ, հասկանալ նրա տեղը համաշխարհային երաժշտության պատմության մեջ: • Մշակութային օջախներում դրսևորել պատշաճ վարքագիծ, համապատասխան պահվածք, երաժշտություն ունկնդրելու մշակույթ: • Արժևորել երաժշտության դերը մարդու և հասարակության կյանքում, գեղեցիկը զգալու, գիտակցելու, արարելու, արվեստի աշխարհում

	անհատական դիրքորոշում, վերաբերմունք դրսևորելու միջոցով: Երեխաների սիրած գործունեության տեսակներից է խաղը, մասնավորապես՝ երաժշտական շարժախաղերը, որոնք կարևոր դեր են կատարում կրտսեր դպրոցականների շարժումային գործունեության զարգացման գործում: Շարժախաղերը լայն հնարավորություն են տալիս երեխաներին ցուցադրելու ինքնուրույնություն և ստեղծագործական երևակայություն: Գործունեության հաջորդ ձևը անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիա է, որի գլխավոր նպատակը սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումն է: Կիրառվում են շարժումային, պարային, երգչային և նվագարանային իմպրովիզացիաներ, փոքրիկ մեղեդիների հորինումներ, տրված անավարտ մեղեդու շարունակում և այլն: Իմպրովիզացիայի բոլոր միջոցները երեխաների մեջ զարգացնում են գեղարվեստական երևակայություն, ինքնուրույնություն, նպատակին հասնելու ձգտում, բարձրացնում երաժշտական գործունեության ակտիվությունը: Տարրական դպրոցում սովորողները ծանոթանում են նաև ձեռքի նշաններով երգեցողությանը. այն զարգացնում է սովորողների երաժշտալսողական պատկերացումները: Ձեռքի նշանները նախապատրաստում Սովորողները բոլոր երաժշտատեսական գիտելիքները ձեռք են բերում երաժշտությամբ գործնականորեն զբաղվելու ընթացքում, ծանոթանում են երաժշտության մեջ դրանց կիրառմանը: Շատ կարևոր է նաև սովորողների երաժշտագեղագիտական ճաշակի և մտահորիզոնի ձևավորումը, որը պետք է իրականացվի ուսումնական էքսկուրսիաների՝ համերգասրահներ, թանգարաններ, թատրոններ այցելության ընթացքում, Սովորողի կյանքում կարևոր տեղ է գրավում նաև դպրոցական համերգների կազմակերպումը, որը ձևավորում է երաժշտություն ունկնդրելու սովորություն և միջոցառումներ կազմակերպելու փորձ:

Երաժշտության մեկ դասաժամի ընթացքում իրականացվում է ուսումնական գործունեության մի քանի ձևեր: Սովորողների երաժշտական գործունեության բոլոր տեսակի աշխատանքների հիմքում երաժշտության ակտիվ ընկալումն է, երաժշտություն լսելու և նրա մասին մտորելու կարողության զարգացումը: Եթե տարրական դպրոցի սովորողի մոտ ուժեղ է երաժշտության ընկալման զգայական, հուզական կողմը , ապա միջին դպրոցում զգայականին ավելանում է նաև գիտակցականը:

Մանկավարժի հիմնական խնդիրներից է դեռևս տարեսկզբին, երաժշտական պարապմունքների միջոցով բացահայտել խմբի բոլոր երեխաների ձայնածավալը և ըստ այդմ էլ ընտրել ուսուցանվող երգերը:

Երգեցողությունը ունի իրեն առաջադրված խնդիրներ, որոնց անթերի կատարման համար հարկավոր է երեխաներին սովորեցնել մի շարք երգեցողական ունակություններ:

Լսողության զարգացման համար մեծ նշանակություն ունի երգի ճիշտ, մաքուր և արտահայտիչ կատարումը ուսուցչի կողմից[1]:

Մեծ նշանակություն ունի երգի ընտրությունը, որը կատարվում է հաշվի առնելով երեխաների նախասիրությունները, հետաքրքրությունները, ինչպես նաև ձայնածավալը.

Երաժշտությունը կատարյալ միջոց է բոլոր երեխաներին՝ հատկապես կրթական առանձնահատուկ կարիք ունեցողներին, ներառել ուսուցման գործընթացում. Երաժշտական փորձառությունը կարող է նրանց համար արդյունավետ լինել լեզվական, ճանաչողական և շարժողական կարողությունների զարգացման համար:

1

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում տարբեր մեթոդների կիրառման միջոցով փորձեցինք աշակերտի մոտ զարգացնել լսողությունը և սերը արվեստի նկատմամբ: Դպրոցում երաժշտության դասավանդման գործընթացն ուղղվում է դպրոցականների երաժշտագեղագիտական, բարոյական, ֆիզիկական,հայրենասիրական դաստիարակությանը:Այդ հարցում կարևոր են միջառարկայական կապերը: Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա, կարևոր նշանակություն ունի երեխայի ձևավորման և զարգացման գործում: Երաժշտական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ուղղված է երեխայի կարողությունների ձևավորմանը, որոնց միջոցով զարգանում է ակտիվ սովորող, ով ընդունակ է ինքնակրթվել և ամբողջ կյանքում պահպանել հետաքրքրասիրությունը երաժշտության և արվեստի նկատմամբ: Այն նպաստում է նաև սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության,ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը,

	հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը; Ներկայացված աշխատանքը հնարավորություն կտա ուսուցիչներին ճիշտ կազմակերպելու երաժշտության դասերը տարրական դասարաններում: Ելնելով վերը նշված նկատառումներից՝ երաժշտական գիտելիքների սերմանումը և սերը երաժշտության նկատմամբ պիտի սկսել երեխայի ծննդյան օրից, շարունակել և խորացնել դպրոցում:

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) Նկարներ Արդյունքներ	

Գրականություն

- Վ. Ա. Սուխոմիլինսկի - <<Սիրտս նվիրում եմ երեխաներին>>
- Յու. Վ. Յուզբաշյան -<<Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը>>:
- Կ.Ղազարյան <<Նախաշավիղ>> :
- Дрозд К. В., Актуальные вопросы педагогики и образования. Учебник и практикум для академического бакалавриата. М.: Юрайт, 2019:
- Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ., 86 էջ: